

ՄԵՐ ԱՅՈՒՆԻ ԿՈՒՆՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՐԵՍՍԻ ՄԱՍԻՆ

Հասցե՝

Réd. du jour. "VERADZNOUTIOUN" Roustchouk

Բաժանորդագին՝ 10 ժր. սարևկան

Ред. на в. "ВЕРАДЗНУТІОНЪ" — Русе

ԲԱՅԱՏՐԵՆՔ

IV.

Հայութեան մէջ, սրա վեց-գարեան ստրկութիւնից ի վեր, սկզբնական և առաջին քաղաքական մարմինը եղաւ Հնչակեան հուսակցութիւնը: Նա հիմնւեցաւ, 1887 թ., մի սրոշ Ծրագրի վրայ, իր թէօրիական գըրութիւններով՝ սօցիալիստական ու յեղափոխական, և կարճ ժամանակամիջոցում անեց ու հաստատուեց իբրև կալմտկերպութիւն: Իրանց սկզբունքներով, իրանց ձգտումներով, գաղափարներով ու համակրութիւններով կանգնած գիտական յեղափոխական սօցիալիզմի հողի վրայ, նրա հիմնադիրներն իրանց այդ տեսակետով քննութեան ենթարկեցին հայկական իրականութիւնը սրպէս թիւրքաց Հայաստանում, նոյնպէս և կողմատու: Այդ իրականութիւնը, մասնաւորապէս և գլխաւորապէս կողմատու, իրաւ, պէն ժամանակ դեռ նորաժապ, կապիտալական ինքուստրիալով ու պրօլետարիատ դասակարգով արդէն հիմնաւոր ու գըրական էր ներկայացնում նրանց սօցիալիստական թէօրիան: Ճակարկն տասն և վեց տարի առաջ նրանք նախատեսնում ու մեկնաբանում էին պրօլետարիատի աճումն ու զարգացումը, հետեւաբար և դասակարգային շարժումները, ուստի հայերի մէջ, — և այժմ, տասն և վեց տարի յետոյ, դա արդէն մեր իրականութեան մէջ հասարակական հիմնական ճիւղանում: Եւ զինեւած սօցիալիստական թէօրիալով, նրանց ձգտումն էր դարձել այդ թէօրիալի պրօպագանդան ու ծաւալումը: Իրականութիւնը, սակայն, այն ժամանակ խիստ սահմանափակ էր ներկայացնում այն ասպարէզը, բանւոր դասակարգային հողը, ուր այդ ձգտումը կարող էր գործադրուել, և այդպիսով սօցիալիստական պրօպագանդան գործնական մէջ գալիս յանգում էր աննշան արդիւնքի, այն է մի բուռ ինտելիգենտ երիտասարդներ և նոյնպէս մի բուռ բանւորների գաղափարա-

կան համակրութեան դէպի սօցիալիզմը: Գործնական մէջ քաղաքական-սօցիալիստական ագիտացիայի և պրօլետարիատի դասակարգային կազմակերպման ու կուրի համար տակաւին հասուն հող չը կար, և Հնչակեան հիմնադիրները կողմից հայութեան մէջ ներս բերած սօցիալիստական թէօրիան կարող եղաւ լինել միայն զուտ գաղափարական հոսանք, որ և շարունակեց մինչև այսօր, երբ այդ հոսանքն արդէն անցնում է նաև գործնական շրջանը:

Այդ պայմանների հետ միասին Հ. Կ. հիմնադիրները սակայն, հէնց սկզբից, իրանց տեսնում միաժամանակ պատմական մի մեծ դիֆիկուլտայի առաջ: Հնչ. Կ. հիմնւելու միջոցին արդէն առաջացած և գոյութիւն ունէր հայ իրականութեան մէջ մէկ ուրիշ պատմական պայման: Սա իր ներքին տրամաբանութեամբ ընդգրկում էր միաժամանակ հայ պրօլետարիատի ընդհանուր իստորի քաղաքական պահանջները՝ իբրև անկախական արդիւնք առաջ եկած ինքուստրիական, առևտրական և առհասարակ տնտեսական աշտումն ու զարգացման ձգտումները: Դա՛ թիւրքաց հայերի վերաբերող այն խնդիրն էր, որ իր սկզբնական տրամալոգութիւնը գտաւ Սան-Ստեֆանոյի և ապա Բերլինի Դաշնագրութիւններում, որով և անցաւ եւրօպական տէրութիւնների միջազգային իրաւունքի շրջանը: Ստեղծուել էր մի դատ, վերաբերող մասնաւորապէս թիւրքաց-Հայաստանին, բայց որն իր ներքին իմաստով ընդգրկելով առհասարակ ընդհանուր հայութեան պատմական ձգտումները, ընդունել էր նաև այդպիսի կերպարանք: Իբրև տրամաբանական արդիւնք թիւրքայի ներքին, այլ ևս փոսած, կարգերի և աշխարհագրական կազմալուծման պրօցեսի, ապա՝ այդ լծից այլ և այլ ալգերի աշտատարութեան իրողութեան, որպէս և անցեալ դարու, բուրժուալիայի տիրապետութեամբ սկսած, առհասար-

ակ ալգայնական շարժումների, — հայկական դատն ընդունեց նախ՝ այդպիսի խնդրի պայման, երրորդ՝ մասնաւորապէս թիւրքաց-Հայաստանի նկատմամբ և երրորդ՝ հայ աշխարհի ինքնախորտրեան, կամ մինչև իսկ անկախութեան, պահանջով՝ ճանաչւած ու վաւերագրւած եւրօպական մեծ պետութիւնների կողմից:

Եւ ահա, ծագելով պատմական այդպիսի մի րօպէում, Հ. Կ. թիւնը, ունենալով հանդերձ սօցիալիզմն իբրև ծրագրային շիմնական սկզբունքներ և այդ հիման վրայ կրելով հանդերձ Սօցիալիստ-յեղափոխական անունը, բայց հարկադրւած շտառնալ սօցիալիզմի միայն թէօրիական քարօղով և տակաւին անկախ լինելով գործնական մէջ կանգնել պրօլետարիատի դասակարգային հողի վրայ, անհանդուրժելի կերպով մըտած էր դէպի մի պատմական ծանր ու մեծ դեր, որն իրականութեան, պատմական, որպէս և եւրօպական քաղաքականութեամբ պայմանաւորում էր չորս որոշ գրութիւններով: Նախ՝ գործնական մէջ Հ. Կ. կուսած էր առաջ բերելու յեղափոխական կռիւ, ընդգրկելով ամբողջ ալգային խնդրի պատմական արտայայտութիւններն ու պահանջները և ձգտելով դրանց իրագործման: Երրորդ, դարձեալ գործնական մէջ, անկախ իր սօցիալիստական թէօրիայից, նա ստիպւած էր ամփոփել ու սահմանել իր գործունէութիւնը լոկային շրջանում, որը յայտնուել էր անմիջական ծննդավայր ու հողայն պատմական պահանջների, այն է՝ թիւրքաց-Հայաստանում: Երրորդ, իր կազմակերպութեան մէջ չէին կարող տեղ չունենալ, կամայ-ակամայ և ընդարձակ ծաւալով, աշտագրութեան ձգտող զանազան տարրեր՝ առաջ եկած ալգային այլ և այլ իստորից: Եւ չորրորդ, իր գործունէութեան մօտակայ նպատակում չէր կարող տեղ չը բունել թիւրքացայն ալգային, եւրօպական տէրութիւնների կողմից անգամ Դաշնագրով արդէն ընդունւած, ինքնաշարժ-

րեան պահանջը, որն էլ, որպէս անկախութեան պահանջ, ըստ ինքնան յայտնեց նրա Ծրագրի ուսմակարական սահմանագրութեան հիմնական մի կէտ թիւրքաց-Հայաստանի վերաբերութեամբ: Մենք ասացինք՝ որտեղ ենք, սրովհետև այդ պահանջը լինելով անխուսափելի արդիւնք թիւրքացայն ժողովրդի ներքին բացառիկ գրութեան, որպէս և եւրօպական քաղաքական յայտնի պայմանների, հայ յեղափոխականի համար չէր կարող — և նրա ոյժից էլ վեր էր, քանի որ երկրում հայն էր ներկայանում միակ յեղափոխական տարր — նպատակ լինել յեղափոխու առաջ օստանեան փոսած ու բունակալ կարգերը, և հետեւաբար հարկադրւած՝ պէտք էր ձգտել զատելու թիւրքացայն ժողովրդի ճակատագիրը սոյլմանական ընդմիջ, յանուն այդ ժողովրդի փրկութեան և առաջադիմութեան:

Իրանք են կազմում պատմական այն մեծ պայմանը, որ արձանացել էր Հ. Կ. առաջ սրա ծագման ժամանակ: Այլ խօսքով, յեղափոխական գործը հայերի մէջ չէր ներկայանում իբրև արդէն պրօլետարիատի վերջնական յախճանակի և սօցիալիզմի իրագործման համար մըտած անմիջական մի կուր, որը կարող է լինել միմիայն զարգացած և ինքնագիտակ պրօլետարիատի յեղափոխութեան միջոցով և քաղաքական ուսմակարական պայմանների ներկայութեան: Այլ խնդիրն առայժմ կայանում էր ամբողջ ալգայի և նրա բոլոր իստորի աշտագրութեան մէջ քաղաքական ստիպումները, որպէս հիմնական մի պայման նրանց ընդհանուր ուսմակարական ձգտումները ու պահանջների իրականացման: Եթէ Հնչ. կուս. խոյստար այդ պատմական մեծ պայմանից, այսինքն վերոյիշած չորս գրութիւնների իրագործման ձգտելու դերից ու պարտականութիւնից, նա կը լինէր մեւած-ծնած մարմին, նա կը հանդիսանար զուրկ քաղաքական կենսունակու-

(Ի՛նչ է՛) տանք մէկ կողմից այն քան էլ մեղադրելի չէ այդ ապագայ հայակեր թղթակիցներին, որովհետեւ մի կերպ նիւթ պէտք է գտնէին իրենց անհամբեր նամակներին սպասող թերթերին ու ամսագրներին), էլ թէ ինչպէս հայերը վճարել են պետական զանազան հաստատութիւններ օգր հանել, 30 բարձրաստիճան Ռուս աստիճանաւորների սպանել, էլ թէ ինչպէս կմախք դարձած հայ հոգեւ. դպրոցները և հայ յանդուգն հոգեւորականութիւնը Ամենայն Հայոց Մկրտիչ Կաթողիկոսի զեկավարութեամբ հայկական անկարգութիւններին և հայ յեղափոխութեան անշէջ օջախը, սիրտն ու հոգին են կազմում (Ինչո՞ւն է... չեն իմանում, որ յիշգրտական անուն լսելուց անգամ հայ հոգեւորականութիւնը 20 արշին հեռու է փախչում), էլ թէ ինչպէս հայ հոգեւոր գործընկերները և սուսանդած 25 առարկաները մի 2, 3 առարկայի բացառութեամբ, բոլորն էլ յեղափոխական և ազգասիրական բնուրուութիւն ունին, և թէ ներկայ հայկական խառնակութիւնների պարագր. լուսնները բոլորն էլ այդ գործընկերները աւարտող հոգեւորականները և նախկին սաներն էին, թէ հայ եկեղեցիները, վանքերն ու հոգեւոր գործընկերները հայ յեղափոխական կազմակերպութիւնների միակ մթերանոցներն են, և վերջապէս հայերի եկեղեցա-վանքապատկան կալուածների գրաւումով հայերը ընդդէմ Ռուս

միտակետութեան արգար տնօրէնութեան, յանդգնաբար ամենուրեք անկարգութիւններ կատարեցին, և դա միմիայն նորահամար, որովհետեւ հէնց այդ մի լիօնաւոր եկամուտներն էին նոցա յեղափոխութեան — քաղաքական նպատակներին ծառայող մասը լուսնոր ալբերը: Շատ բնական է — աւելացնում է Պետերպոլսի յայտնի պահպանողական «նով. վրեժի» խմբագիրը — որ Ռուս պետութիւնը չէր կարող այս յայնացաւորս երեւոյթին սառն հանդիստոնս լինել, և թողնել, որ հայերը իւր պետութեան հոգերի արգիւնքով իւր գէժ վիճակին... և իւր ամէն մի քաղաքական ձգտումներին խոչնդոտ հանդիսանան (արգարացուն պրծան, էլի, Ռուս վարձկանները): Է՛հ! սիրելիս, մի առ մի թուել Ռուսաց լիբր թերթերի պոչաւոր առասպելախառն ստերին. մեզ շատ հեռու կ'տանէր: Այս բոլոր ցընդարանութիւնների հետեանք այն եղաւ, որ նոյն թերթերի ստոր շովինիստները, իբրև մի անմահ գիւտի հեղինակներ, սկսեցին կամաց կամաց իրենց յարձակումների տօնը աւելի կատարելագործել. օրինակ, «Մոսկ. Վեո. և սիրահանչակ հայակեր թերթի» խմբագիրը, որպէս թէ այդ բոլոր անվիճելի ֆակտորը լոյս աշխարհ հանելուց յետոյ, այսպէս է վերջացնում իւր մի յօդուածը. «Մենք շատ վաղուց մշտապէս հանդէս ենք բերել հայերի բացասական կողմերը, նոցա քաղաքական գործերով զբաղուելը ու

նոցա հակառուսական յանդուգն ձգտումները, բայց մեր լիբերալիստ կոչուած թերթերի անկոչ հրապարակախօսները ձգտում էին ամէն ինչ հերքել, և մինչև անգամ յօդուած հայերին խօսել: Իսկ այժմ, գոհութիւն Աստուծոյ, նոյա եկեղեցական կալուածների 1903 թ. Յունիս 12-ի բարձրագոյն հաստատութեամբ գըրաւման ժամանակ, հայերը ամենախիտաւոր կերպով իրենց գոյնը ցոյց տուին: Շատ ուրախ ենք և:

Դժբաղդաբար ասեմ թէ բարեբաղդաբար, «Մոսկ. Վեո. և սիրատուելի» խմբագիրը և իւր բարանակները հայերիս գոյնը միմիայն բաց անելով չեն բաւականանում, նոքա այն աստիճան լըրբանում են, որ ուղղակի հայերին բացայայտ կերպով «բայկոտիս են կոչ անում (ականջ կանչի ազիզ Վելիչկոյի): Օրինակ, նոյն թերթի թիֆլիսի թղթակիցը հազար ու մի չեղած մեղադրանքներ հայերի շինքին փաթթելուց և անպատկառ հայհոյանքների կոյտեր հայերի հասցէին շարտայընելուց յետոյ, էլի այսպէս է վերջացնում իւր յօդուածը. «Հրաւիրում ենք մեր պետութեան շահերի նախանձախնդիր ուղղափառ հայրենասէրներին, մեր ամենաովերիմ և վտանգաւոր թշնամու — հայերի — դէմ գործելու և իսկ նոյն թերթի խմբագիրը իւր մի առաջնորդող յօդուածում այսպէս է գրում. «Հիւրասէր Ռուսաստանում հրէաներից յետոյ ամենից շատ հայերն են նորան

անյարմարութիւն և հոգս յարուցանում, որոնք արդէն չափազանց մեծ հարստութեան և դիրքի տէր են դարձել: Շուտով կ'հասնի այն բոպէն, երբ Ռուսները կարող կլինեն ասել, որ «Ռուսաստանը միայն Ռուսների համար է և: Ձեր տներում վերադարձէք Ռուսաց քողարկուած անկոչ թշնամիներ և:

Սիրելի ընկեր! այս անգամ այսքան բաւական է, առանց այն էլ ես կարծում եմ բաւական երկարեցաւ նամակս: Խոստանում եմ յաջորդ անգամ շարունակել քեզ հետաքրքրելի այս միևնոյն նիւթի մասին:

Սիրալիբ ողջոյնեք և համբոյրներ Կեզ սիրող — Արար:

Մոսկուա 20 Դեկտ. 1903 թ.

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ՍՈՒՐԶԱՆԻԱԿ ԵՐԵՒԱՆ, 25 Դեկտ.

Երբեմն տածիկ կառավարութեան վրայ կիսնդայինք, երբ սա ձերբակալում էր նեկաքներ, որոնք ինչարկէ իրենց մէջ չէին կրում սրև է հակակառավարչական միտք: Այսօր նոյն բանը գրեթէ աւելի ծիծաղելի կերպով կատարում է ցարի կառավարութիւնը: Ձերբակալում են նըկարներ, գրքեր, հին ժամանակներից մնացած չախմախիներ և այլն: Եւ վա՛յ այն թշուառականին, որ իր տան մէջ կուսեւնայ այդ տեսակ վտանգաւոր նիւթեր: Նոյն իսկ հաւաքում են 1903 թուի հրատարակութիւններ

ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԻԿ 12

ՉԱՐԱԽՕՍ ԹՉՈՒԿԸ
(Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵՒ ՇԷ ՀԱՍՏԻՆ)

Այժմ պատասխանեք Առաքելականին հետեւեալը. — Պարբերում է իր հօրենական տնից լիովին իր անկախ եւ ազատ կամքի վճարով: Այդ վճարի գումար հարկադրում է իր ընտանեկան անդամներին մի քանի դառն դիպակներ շնորհով, դիպակներ, որոնց հետեւեալը ոչ ինքն է եւ ոչ ոչ էլ մեկ, այլ ՄԻ ԵՐՐՈՐԻ ԱՆՁԱՆՈՐՈՒԹԻՒՆ: Այս վերջինս մի քանի անգամ անգամ, մեկ անգամից և անմիջապէս որևէ արդիւնքի եր մի չի տր քիւրիսուսութեան: Հեկն ԱՅԻ ԲԱՅԻԿ էլ արդիւնք եղաւ դիպակներ հօրենական սեղ, որ, կրկնում ենք դարձում ու դարձում, սեղի ունեցաւ նոյն իրս, օրինորի, ազատ եւ անկախութիւնը անհնար, ստանց որ եւ անկախութիւնը անհնար մեր կողմից այդ մեկով, — այլ եւ ընդհանրապէս:

Այդ խնդրի մասին չենք ուզում եւ մեր իրաւունքն էլ չենք համարում մտնել մանրամասնութիւնների մէջ, քանի որ դրանք ներքին խնդիրներ են ոչ միայն մեզ վերաբերեալ, այլ եւ մի շարք ուրիշ անձնաւորութիւնների: Բայց մեր ներկայացրածն էլ արդէն լիովին պարզում է խնդրի էութիւնը: Այդքան էլ անհրաժեշտ է շատ ու շատ է եւ մեծ, շատ մեծ պատիւ է նրան, և եթէ մենք այդ անում ենք, դա մի-

այն մեր լացնելու համար նրա գրգորող սիրտը: Որովհետեւ, յիշելով, իսկապէս ոչ օր. Մէլիք-Ազարեանցը, ոչ նրա ընտանիքը եւ ոչ էլ մենք ոչ մի կերպ, ոչ մի պարագայում եւ ոչ մի ինքնակերպ, «հաշիւ» տալ Առաքելականի պէս դրսեց կեղծին կամ որ եւ է մէկ արդիւնք մեր կեանքի ներքին խնդիրների եւ անցքերի մասին: Իսկ միայն մեր գործն է եւ մի միայն մեր գործը: Եւ պէտք է լինել մէկ Առաքելական վտարար բնուրուութիւն համար մեր այդ անձնաւորութիւն բնական իրաւունքը: Եւ այդ բաւական չէ, այլ եւ աչքակապութեամբ պարագայի Մէլիք-Ազարեանցի նկատմամբ իբրև թէ սրա հայրական իրաւունքների շտապով: Առաքելական աչքակապութեամբ, որովհետեւ մեծապատիւ մուրացիկան իսկապէս հէնց նոյն Մէլիք-Ազարեանցի պատերն է դիպում, նրա ընտանեկան ներքին անցուդարձերն հանելով բազար, խճճելով, շփոթելով ու հնարելով արտոտ առակներ, ծայր է ծայր կիսատ-պատ, անկապ, անձեւ զբաղւորութիւններով, պատասխան բանասանքներով, սքիկայական մեկնութիւններով ու վերաբարանքներով, այնպէս որ չէ մնում միջին իսկ մի կէտ, որ գէթ մաշակարի մտնար եղելութիւններին:

Շատ քատն հրապարակի վրայ եւ շատ քատն գրչի — անա՛ այն անունը, որ մենք զըրոշում ենք Առաքելականի ձեւատիւն: Եւ այն որդերից է, որոնք միշտ ձեռք են թափում կաղնի ծառի արմատը քրքրել, երազելով գըրեկ

նրան: Այդպիսի որդեր հայերս ունեցել ենք միշտ: Ժամանակին — այդ անցեալը խիտ թաք է — հայ ազգն ունէր մի կաղնի ծառ, եղալի, որի արմատը քրքրելու եւ նրան տապալելու համար շատ որդեր շարունակ ձեռքեր էին թափում: Վախճանս, ի հարկէ, այն եղաւ, որ որդերը սատակեցան, իսկ կաղնի ծառը... ան նախա՛ն: Մի հասարակական գործիչ, հայերիս մէջ մե՛ծ, իր կեանքում շարտայը հաշիւ-ւեց այն ժամանակեայ Առաքելականի կողմից: Նրան, ի միջի այլոց, կատարած ամբարտաւանք էին, թէ «ուրիշ» կնիկի փախցրելը, անտարսկոյս նոյնպէս, ինչպէս մենք, «առաջալի», քիւրդի նման»: Իսկ փաստն այն էր, որ մէկ անուսնալից կին (դարձեալ՝ ամուսնացած, եւ ի՛նչ, այն էլ կին), «համբաճակե՛լ էլ սիրել» այն գործիչին և ապա ձգել ամուսնու տունը: Բանքասանք, զրպարտութիւն, վտարանութիւն, ամեն տեսակ ամբարտաւորութիւն, իր դիմացը եւ իր շուրջը տեսնելով դիպ պատմող դիպարիչ անուսնեքի, ամեն գոյնի շարտայընելութի, փարիսեցիներին, նախանձախնդրի, թղթակիցներին, Յուդայի լայնահայ մի երա՛մակ, Մենք Արիստում ենք, ուր անիւրստութիւնը եւ տնօրէնութիւնն են դարձնում օրէնք, եւ գործիչին շարտայընելը, իրանց անպատիւ տեսնելով, ստի՛ն ու լրայ արած նաաարաւորութեանը՝ պտուղ էին թէ նա «անարար յայտն է, արժանի է պատիւ իր յանձնակցի համար, հասարակաց խճճուանքը պէտք է նրան դա-

տապարտէ», որովհետեւ նա «որիչի կնիկ է փախցրել, ուրիշը՝ պատիւ ու յոյսեր է խորտակել» և այլն: Երկար տեւեց այդ հարածանքը: Գործիչը պատպանեց առիծի պէս՝ յանուն արատութեան սկզբունքների և խոսքին արձանարանը լիցնաց, որպէս եւ մտորակեց այն հասարակութեան, որ ունի այնքան խորթ գաւախներ: Իսկ երբ նա վախճանեց, ազգը սգոյ մէջ էր, և նրա դարալի ոտքերը լիցնում էին նոյն օձերն ու վտարանաղնիքը, որոնք դեռ երկէ անամբար հալածում էին նրան... Այդ գործիչի անունն էր՝ Գրեգոր Արժուներ:

Եւ քաղաքական նշանաւոր գործիչներից եղել են այնպիսիներ, որոնք իրանց կեանքում ունեցել են նոյն օրինակի դէպքեր: Ոչ մի հարցապոյզ գլուխը սակայն չէ մտել ստորստար ներս թափանցել այդ գործիչների ներքին կեանքը եւ հրապարակապէս հալածել ու քարկոծել նրանց, ուրանայ նրանց գործունէութիւնը, նըրանց տաղանդը: Ոչ միայն դատական մէկ օրեկէ կը լինէր նրանց պաշտպան այդ դէպքում, այլ եւ հասարակական բա՛խն ու կարծիք... Միևնոյն մեղաւորում... Բայց չէ՞ որ ասիացի հայերը բարոյական են, իսկ եւ քաղաքական լուսաւորաւ ազգերը... անբարոյական...

(Շարունակելի)

ըր, որոնք անցել են ուսուցանողների քաղաքի բոլորից :

Դեռ անխնայ կերպով շարունակում են ձեռքարկությունները : Հարկաւոր հայերով լրացում են ուսուցանող ստակալի բանատեղը, որոնք իրենց զաչիր և ապականուած միջոցառումով, ներքին կազմակերպութեամբ ոչնչով չեն տարբերում տանկականից : Ներքը՝ որդնալից, կերակուրները՝ հոտած և 20—25 հոգի մի գամերի մէջ Ներկայ մեր գրութիւնը նոյնն է, ինչ որ 92 թուականի խոյրան. — գիշերը քնողը անյետանում է, ցերեկը շուկայ գնացողը անյետանում, հետևապէս և ամէն մարդ իրիկուն և առաւօտ պարտաւոր է նախօրը մնաս բարև ասելու իւր գերբաստանին՝ քանի բանտ չէ գնացել :

Արդար մեզուոր հարցնող չկայ, բռնածը կնալին : Առական ասում է թէ՛ աղուէսի մէկը քաղաքից խիստ կերպով փախչում էր, երբ այդ ժամանակ դէմը կեղնէ նապաստակ մը : Ծօ ինչո՞ւ կփախչես, ասում է նապաստակը : — Ի՞նչ ընեմ, պատասխանում է աղուէսը, քաղաքում այլ ևս չմնաց կնալին : — Է՞, դո՞ւ ինչու կփախչես, քե՞զի ինչ : — Ծո՛ ախպար, բռնածը կնալին, դէ դու արի հաստատէ թէ ձի չես, աղուէս ևս : Եւ ուսուցանող կարութեան մէջ իհարկէ միևնոյն է, ձին կամ աղուէսը, — բռնածը կնալին :

Աքսորուածներին թիւ չկայ, բայց վերջերս երբ կառավարութիւնը համազուտեց, որ քսորուածները՝ ուր էլ որ լինում են՝ իսկոյն իրենց համար լաւ պարագամուք և յաջող առևտուր են գլաւում, փոխնց երեւի այդ քաղաքակառուցութիւնը և արդար ու մեզուոր բանտ զրկելով, կենդանի գերեզման է իջնցնում, որովհետեւ բանտ գնացողը ոչ կարծակուրի և ոչ էլ նրա ուր լինելը կյայտնուի :

Ծներով, բարակներով ու թաղիներով վիտուում են մեր փողոցները : Մատնիչներ, գալտնի պոլիցիա, ստորին, ծառայողներ տեղալին շարժման մէջ են : Մարդիկ իրենց տան մէջ նոյն իսկ ազատ չեն, այն տեղ էլ հըսկում է կառավարութեան պաշտպան դուրնիկը, որը գարձեալ, մի ստիկան է : Երկաթի ճիրաններով ժողովուրդը ճզմնելով, այդ վայրագ կառավարութիւնը ուզում է պահպանել իր գոյութիւնը : Բայց ի՞նչպէս, ճնշուածը միշտ բողոքում է, սարուկը միշտ գործում՝ դէն չպրտելու աւելի անտանելի դառած այդ դաժան լուծը : Մի՞թէ երկաթէ այդ ճիրանները կարող են յետ կանգնեցնել այն տեւորիտուն, որ հուպէառ հրեշտակի նման յանկարծ բռնում է զաւաճանի գլխավորները :

Վերջին ցոյցի պատճառով բանտարկուած անմեղները գեռ

տքնում են բանտերում : Դեկտ. 22-ից քննուում է մեր քաղաքում 30-ի չափ ձեռքարկութեան զործը, որոնք շնախելով ոչ մի յանցանք չունին, բայց այնուամենայնիւ միապետութեան ուժով իր կոյր մարմնացումը արտայայտող տեղական պրոկուրորը իր մեղադրական ակտում ամենքին էլ առանց խտրութեան, գատապարտում է 10—20 տարի կատարիկ : Կարգացէք այդ սպորմնիկութիւնը, ուր ըստ էութեան ոչ մի յանցանք, ոչ մի սպանութիւն չկայ, բայց կատաղութեան թոյնը բերաններին, նոյն իսկ պտորաստ են կախաղան բարձրացնել այն մարդուն, որ գէթ մի ազատամիտ հայեացք կամ խօսք արտայայտելու համարձակութիւնն է ունեցել : Այդ մեղադրական թերթում առաջին յանցանքներն են դրուած «գաւառապետի ձիուն քար գցելը», «ոչինչուրներին հրելը» և ձեռքներին «փայտ ունենալը» : Իսկ եթէ գտնուէին նրանք, որոնք ստիկանապետի վզակով մի հարուած են տուել և օգի մէջ մի ատրճանակ արձակել, երեւի դրանց կախաղան կհանէին : Քննութիւնները գեռ շարունակում են : Յանցաւորներին գործը պաշտպանում են զանազան քաղաքներից հրաւիրուած 7—9 փաստաբաններ, որոնք բացառապէս ուսուցանող են : Պէտք է նկատի ունենալ, որ ներկայումս ոչ մի հայի ո՛չ խօսքն է ընդունուում և ո՛չ վկայութիւնը, բոլորն էլ, առանց բացառութեան, արժանացած են ուսուցանողութեան բուռն ատելութեանը :

Արդարագատուութիւնը վերացած է բառի բուն նշանակութեամբ : Որպէսզի ժողովրդին ահ ու սարսափով խաղաղեցնեն, հլու դարձնեն, պէտք է բարձր պատիժներ կատարուեն ժողովրդի ամեն խաւերում : Մի փոքր կասկածի տակ ընկնողը, բանտն է նետում, իսկ աւելի յանցաւորներին վերապահուած է աքսոր, թիարան, հալածանք և մահ : Կառավարութիւնը տաժանակիր աշխատանքի է գատապարտում իր պաշտանեայի ձիուն քար գլցողին, բայց ինչ պատիժ տալ տան դաժան յանցաւորին, որ հըրաքանի բերան տալով հարկուարան անմեղներին զերեզման իջնցրեց : Նա սպանում է որդուին, իսկ երբ սրա թշուառ հայրը համարձակում է լայ լինել իր որդու գիւղի վրայ, նա վերցնում է և բանտն է չարտում նրան :

Ահա մարդկային սիրտ և արդարագատութիւն . . .

Խաչատուր Նարիման

ՀՆՉԱԿԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ

(Շար. նախորդ թիւէն և վերջ)

Այս բոլոր բացատրութիւններէն յետոյ պ. Բանախօսը կրակոտ շեշտելով ու ոգեւորուած «կեցցէ՛ յեղափոխութիւն» բացաղանջելով հրաւիրեց Հայութիւնը բոլոր ուժով նետուիլ յեղ. ապարեզը :

Մտփեքու մէջ պ. Հրահատ վերջացուց իր խօսքերը :

Ասկէ ետքը պ. Նախադասը յայտարարեց որ ներկաները ազատ են իրենց կարծիքները յայտնել կամ հարցազնուելու ընել պ. Բանախօսին : Չնայելով այն հանգամանքին, որ պ. Հրահատ բոլոր հարցերը արդէն շօշափած էր, սակայն դառնուեցան անձեռք, որոնք փորձեցին այս և այն կողմէն, սարէն ու ձորէն՝ յետին մտքերով սոգորուած հարցումներ ուղղել պ. Հրահատին, որ կեղտ իր կարգին մէկիւն-մէկիւն բողոքին ալ պարտ ու պատշաճ պատասխանը տալ, և որոնք շատ անգամ բռն ծախանաբույրներով պատկուեցան :

Աւելորդ չի լինիր սակայն այդ հարցերէն մէկ քանին գետեղել հոս իբր նմուշ :

Տրուած թոյլտուութիւնէն օգտուած լինելով՝ նախապատրաստուած պարոն մը հարցուց ատենախօսին թէ 1. «Ինչո՞ւ Շահէն ու Չիթճեան սպանուեցան» 2. «որո՞նք են 96-ի հայախղափոխականները» 3. «Ինչո՞ւ Միութիւնը քանդուեցաւ», և 4. «Ի՞նչ պատճառով 13 անձեր արտաքսեցիք «Հընչակ»ով :

Պ. Բանախօսը հակիրճ ու խիստ գոնացուցիչ պատասխաններ տուաւ : Թէեւ հակառակորդները կը դեռնէին : Առաջին հարցին պատասխանը արդէն արուած ըլլալով պ. Բանախօսը երկու խօսքով զարձակ կրկնել չի զրացաւ : Երկրորդին համար գոնացուած միայն Արփիարի անունը տալ, թէեւ կ'արժէր շատեր ալ թուել անոր կարգը : Երրորդ հարցին՝ նոյնպէս համառօտ յայտնեց թէ մտքերու և բարոյականի հակակցողութեան տարբերութեան պատճառով անխաբի եղաւ միասին գործել և հետեւաբար ինչպէս որ շինուեցաւ, այնպէս ալ քանդուեցաւ : Իսկ չորրորդ հարցին համար ըսաւ թէ՛ ինք ոչինչ չի կրնար աւելցնել այն յայտարարութեան վերայ, որով արտաքսուած են նոյն այդ 13 անձերը և հրաւիրեց հասարակութիւնը կարգաւ 1903 Յունվարի թիւ 1 «Հնչակ»ը, ասանց ժամաբանութիւններու մէջ մտնելու, մասնաւոր նկատելով որ այդ կուսակցութեան ներքին գործն է :

Աւելի մը բացատրութիւն խնդրեց թէ կարելիութիւն կ'այ հայ յեղ. կուսակցութիւններու միջեւ միութիւն մը կայացնել և այդ մասին պ. Բանախօսի անհատական կարծիքը ուղեց : Պ. Հրահատ, որ նոյն միջոցին բեմ բարձրացած էր իբր Հնչակուս. ներկայացուցիչ և պաշտօնական ոմն, զանց ըրաւ այդ տեսակ հարցի մը պատասխանել քանի որ իր օրուան նիւթը չէր ևս յայտարարեց թէ ո՛վ որ կը փախաբէր իր անհատական կարծիքն առնել այդ հարցի մասին, թող հաճէր տեսնել զհարցը այդ վայրէջ գոտու : Հակառակ այս պարզ ու հասկանալի յայտարարութեան, նոյն այդ անձը յատուեցաւ պ. Ատենախօսէն երկու քանով բացատրութիւն խնդրել այդ նոյն նպատակաւոր հարցի նկատմամբ : Պ. Հրահատ կրկին մերժեց պատասխանել այդ տեսակ հարցի մը, բայց երբ հարցը վճռողական դարձաւ, պ. Բանախօսը հեզմայիտ և զանակով մը «եթէ երբուր քառով միութիւն չի ներք, երկու քառով ալ կը քանդուի» ըսաւ՝ գտնուեցաւ այդ սարսափնակ հարցը զարմարուած վրայ այդպէս թեթեւ կերպով նայելուն :

Այս յայտարարութիւնը ընդունուեցաւ բուռն ծախանաբույրներով : Աւելի մըն ալ ինքզինքը կախելու աստիճան յիմարութեանց դիմեց Հնչակեան ընկեր մը վարկաբե-

կելու տեղէն բռնուած ու սրճախանական խեղաթիւրուած, անհիմն խօսքեր գլորեց : Ճաշուի էր վիճակը այդ հոգեկան հիւանդին, որ նպատակաւոր պրօպագանդայի մը գոհը սղած էր :

Այն հարցին թէ սոցիալիզմը կը նկատուի արգելք միութեան, յարդեւ լի բանախօսը հարց գրաւ թէ՛ ապահինչո՞ւ դաշնակցականները և վերականգնողները չեն միանար : Մէկը միանաօրէն խոստովանեցաւ թէ ատոր ալ արգելքը կեղբոնացուած ի և ապահեղբոնացուած դրուած լինելուն են : Պ. Հրահատ այս փաստն ալ իր ձեռքըն ունենալով մէջ բերաւ որ եթէ այդ չլինէր, ուրիշ պատճառներ անպակաս պիտի ըլլային միութիւնը չկատարուելու համար և օրինակ տուաւ մակեդոնական յեղ. կուսակցութեանց պատմութեամբ, որ արդենք է ո՛չ թէ սոցիալիզմի, կեղբոնացուած կամ ապակեղբոնացուածի, այլ բոլորովն ուրիշ պատճառներու :

Աւելի պարոն մըն ալ հարցուց թէ ինչո՞ւ միութեանական և ալիքաւորու կուս. ներք չեն միանար, քանի որ որոշ արգելք մը կամ պատճառ մը չունին : Միութեանականները չի կըրցին պատասխանել, որովհետեւ խեղճերը անդիտակ են թէ ի՞նչ կ'ընեն, անորոշ, տարտամ ու անպատակ (քրեւապոլի կ'ապրին ողորմելիները) : Անոնց փաստաբանը (որ ոչ միութեանական է և ո՛չ ալիքաւոր) ատալ բերաւ թէ միութեանականներու նպատակն է միացնել նախ միւս յեղ. կուս. ներքը և ապա իրենք ալ միանալ : Պ. Բանախօսը հեզմայիտեղէն յարց թէ «եթէ երբք յեղ. կուսակցութիւնները իրար միացնելու համար չորրորդ կուս. մը պէտքը կար, ուրեմն չորս կուս. ներք իրար միացնելու համար չի նպատարաւորուի մը պէտքը չկայ և այդպէս յաւիտենականապէս» :

Բուռն ծախանաբույրութիւններ անդունդէ անդունդ գլորեցին հակառակորդները, երբ ասոնք շարունակ իրար հակառակ իրախառնէին փաստելով թէ «միութեանականութիւնը կուսակցութիւնն է, այլ կալմանիւրպութիւնն է, որ աստեղ անոնց ջնջը բեմ բարձրացաւ յայտնելու համար թէ յանձնախումբ է և փառաւորապէս ջրեց այն՝ ինչ որ իրենց փաստաբանը յայտնած էր ի հաշիւ իրենց տգիտութեան :

Յետին միջոցով պ. Նախադասի կարծիքը խնդրուեցաւ սոցիալիզմի մասին : Պ. Վարդօ դաշնակցական հասկացողութեամբ աշխատեցաւ ցոյց տալ թէ սոցիալիզմը նպատակաւորաբար չէ հայկական յեղափոխութեան ըստ որում 2. Յ. Իսպանացութիւնը զայն չէ ընտրած իրեն անմիջական կամ երկրորդական նպատակ : Բայց ընդունեց թէ սոցիալիզմը գիտական վարդապետութիւնն է մըն է և թէ ապագային կրնայ բարեբանը ընծայել : Յետոյ նոյնպէս ջանաց ցոյց տալ թէ ատոր համար մեր մէջ հող չկայ :

Ի վերջոյ պ. Վարդօ, դաշնակցական տեսութեան և պ. Հրահատ Հընչակեան հասկացողութեան վրայ հիմնուած, այնու ամենայնիւ, Ռուսաստանի մէջ պաշտպանողական կոիւր գտան անհրաժեշտ :

Պ. Վարդօ յայտարարեց որ կովկասի մէջ ալ պէտք է կուսակցութիւն ուժով . . . — Ուրեմն հոն ալ կըրուելիք, ըսաւ պ. Հրահատ և պ. Նախադասի յայտարարութեամբ ժողովը փակուեցաւ, ժամը 12-ը անցած, կեցցե՛ կրնա՞ւ ուրախ և որոտընդոտ ազակներու մէջ թողնելով հասարակութիւնը գոհ և լաւ տպաւորութիւնով մը համակուած :

Վառնա Գ. Հրայր
Отговорникъ: Степанъ Г. Степанянъ
Печатница Б. Н. Малджиевъ—Русе